ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ

ԲՆԱԿԱՎԱՅՐ

Առաջնորդվելով ապահովության և ինքնապաշտպանության հարկադրանքից, դերսիմցիները նախապատվություն էին տալիս գյուղերը հիմնել բնականից պաշտպանված լեռնածոցերում, առավելապես ձորափնյա վայրերում, լեռնահովիտներում և սարի ժայռերի ստորոտներում։ Գյուղեր հիմնելիս, թաղեր կազմելիս հնարավորություն չունենալով հաղթահարել բնական պայմանները, մարդը ստիպված ենթարկվել էր դրանց և ըստ այնմ կառուցել իր բնակավայրերը։

Ներկայացվող շրջանը հարյուրավոր գյուղերից, տասնյակ ավաններից ու փոքր քաղաքներից բաղկացած մի լեռնաշխարհ էր, իր այլազան բնակավայրերով և մեկը մյուսից տարբեր ձևի կառույցներով։ Դրանք կարելի է բաժանել չորս խմբի՝ լեռնադաշտային գյուղեր, ձորափնյա գյուղեր, գոմեր և մեղրեներ, ապառաժների և լեռնածոցերի կողերին հաստատված գյուղեր։

Լեռնադաշտային գյուղերը, որոնք առավելապես հիմնված էին սարալանջերին և գոգավոր լեռնաստորոտներում, ավելի բազմամարդ էին լինում։ Տների կառուցման ձևը, թաղերի բաժանումը, գյուղամիջյան հրապարակների, կալերի ու տնամերձ հողերի դասավորումը թողնում էր այն տպավորությունը, որ կարծես գյուղը կառուցվել է հատուկ հատակագծով, թեև նման հատակագծի մասին գաղափար անգամ չունեին։ Գլխավոր դերը վերապահված էր բնական հարմարանքին, բայց և այնպես կային գյուղամիջյան հրապարակներ՝ նախոճաշ, ուր առավոտ կանուխ համախմբում էին գյուղի նախիրը և կամ դիմավորում էին դրսից եկող հյուրերին։

Կային ուղիղ, երբեմն միայն կորաձև թաղամասեր, որոնց միջով անցնում էին ձորից բերված մշտահոս առուներ։ Այդ թաղամասերը կոչվում էին մեյլե և մեծ մասամբ անվանվում էին տոհմանուններով (եթե թաղի բնակիչների մեծամասնությունը նույն ազգատոհմին էր պատկանում)՝ մեյլե Խըտրգան, մեյլե Ղըլոթան, Պաղղոյից մեյլե, Եղեկոյ մեյլե. Կարապետից մեյլե և այլն, որոշ դեպքերում միայն՝ տեղանվամբ (վերի մեյլե, վարի մեյլե և այլն)։

Եթե գյուղն ուներ հայ և բուրդ խառը բնակչություն, քրդական կամ հայկական առանձին թաղամասեր չէին լինում (Պաղտոյից տանը կից Հեսիպից տունն էր, Գաբոյից տան շարունակությամբ՝ Սեիտ-հաձին էր)։ Պարագան տարբերվում էր, երբ գուտ հայաբնակ և քրդաբնակ գյուղեր էին լինում։

Թաղամասից-թաղամաս միայն դատվում էր միացյալ տանիքների հավաքական իմբավորումը. թաղամասի տների հողե տանիքները կցված էին իրար, հավաքական իսդերը, պարերը, ուրախությունները կատարվում էին տանիքներում և կամ կալերում, եթե այդպիսիք գտնվում էին թաղերի շրջանակներում։ Նայած բնական հարմարությանը, կալերի խմբավորումներ շատ կային։

Եթե գյուղը հայաբնակ էր կամ քրդահաուն, եկեղեցին կառուցված էր լինում գյուղի բարձրադիր մասում, որը իշխում էր թաղամասերի մեծամասնության վրա։

Գերեզմանատներն առհասարակ լինում էին գյուղից դուրս, բարձրավանդակների կողերին կամ բլուրների շուրջը և ստորոտում։ Եթե գյուղն ուներ բուրդ և հայ խառը բնակչություն, լինում էին նաև առանձին գերեզմանոց և գոռնոց, որոնք իրարից բավական հեռու էին։

Հայերի գերեզմանոցներին կից առհասարակ սրբերի անվանը նվիրված փոքր մատուռներ կային, որոնք զուրկ էին եկեղեցական սպասներից և որոնց դռները պարզ դարանով էին փակում։ Այդ մատուռում պահում էին մեռելաթաղի ճաղը։

Գերեզմանատները սովորաբար գտնվում էին արտուռի ծառերի ստվերների տակ, ամեն գերեզմանոց ուներ իր լիսաղբիր (լույս աղբյուր)։

Քարից ու կրից շինված հատուկ տուն-գերեզմաններ չկային, բայց գերեզմանոցներում ամեն

մի գերդաստան ուներ իր տոհմային հողամաս, որ թաղվում էին նույն գերդաստանի անդամները, եղբայրը՝ եղբոր կողքին, որդին՝ հոր, թոռը՝ պապի, և այսպես կազմվում էին տոհմային գերեզմանային թաղեր, որոնք թեև ճշտորոշված սահմաններ չունեին, բայց ամեն մի գերդաստան գիտեր իր մեռելները թաղելու սեփական հողատարածությունը։

Գյուղում ծնված, մեծացած և նոր ընտանիք կազմած մարդը սիրում էր իր ծննդավայրը։ Նա հազար թելերով, արմատներով և հիշատակներով կապված էր իր գյուղին և իր տոհմային ընտանիքին, բաժանվելու ժամանակ գերադասում էր ավելի փոքր և սահմանափակ բնակարանում ապրել, քան թե հեռանալ գյուղից։ Բացի հարկադրական պարագաներից, գյուղից հեռացողներ և ուրիշ գյուղերում բնակություն հաստատող ընտանիքներ գրեթե չկային։

Երբ մի մեծ գերդաստանի տոհմային տունը բաժանվում էր, նախ նույն տան շրջանակում նոր հարմարություններ էին ստեղծում, առանձին ննջասենյակների բաժանում և նույն երդիկի տակ ապրում։ Ընտանիքների զարգացման պարագային, երբ բնակելի տարածությունները չէին բավարարում բնակիչների պահանջները, փոխադարձ համաձայնությամբ մեկը մյուսին էր տալիս իր բաժինը, և համագործակցված ձևով, փոխադարձ օգնությամբ նոր տուն էին կառուցում հին տանը մերձ հողամասում, որին հաջորդում էր երկրորդը, երրորդը և այս ձևով թաղը (մեյլեն) խտանում կամ նոր թաղեր էին կազմվում։

Ախոռը, գոմի մարագը տան անբաժանելի հարակից մասն էին կազմում, գյուղական բնակավայրերում բացօթյա աղբներ չկային, որովհետև նման աղբները, գոմերը և ախոռները գտնվում էին արտագյուղյա գոմահանդերում։

Աղաների և աշիրապետների բնակարանները (ղոնախ) առանձնացված էին, տեղ-տեղ պարսպապատ։ Գյուղի ամենալավ մասում կառուցված այդ ապարանքներն իրենց կառույցով և ծավալով տարբերվում էին գյուղացիների տներից։

Առանձնացված կալեր քիչ կային։ Նայած տեղական հարմարություններին, կալերը տեղադրրված էին քով-քովի, գյուղի թաղերի բաժանմանը համապատասխան։ Կային ընտանիքներ, որոնց բնակարաններն ու մարագները տեղանքի բերումով այնպես էին դասավորված, որ հաճախ կալը հավասարվում էր տանիքին, իսկ տան դուռը բացվում էր կալի վրա։ Վերի թաղը եթե տեղադրված էր բարձրության վրա, ապա տները կառուցված էին ոչ թե ուղիղ փողոցով, այլ բոլորակաձև, սատի բարձունքի հարթակում իրար կից գտնվում էին նույն թաղամասում ապրող ընտանիքների կալերը։

Ջրամատակարարման հիմնական միջոցները պենտաները, ոռոգման առուները, փողրանով (փողրանը) սարերից բերված ջրերը և ինքնաբուխ ակերն էին։

Ձորափնյա գյուղերի մեծամասնությունը հիմնված էր ձորամիջերում։ Տների կառուցումը, պահպանելով հանդերձ լեռնադաշտային գյուղերի ձևը, տարբերվում էր նախորդների թաղային կանոնավորությունից, որպես արդյունք տեղանքի ընձեռած հնարավորությունների։ Տներն անկանոն ընկած էին ծուռումուռ զառիվեր փողոցների վրա։ Ամեն մեկը տեղավորվել և իր համար հարմարություններ էր ստեղծել, առանց ուշադրություն դարձնելու թե տան դուռը փողոցի, թե դրացու տան գոնակի վրա է բացվում։ Նույնն էր պարագան կալերի կամ այլ կառույցների նկատմամբ։

Գոմերը և մեղրեները բոլորովին այլ պատկեր էին ներկայացնում, եթե ոչ տան ձևի, գոնե հարմարությունների տեսակով։ Այստեղ այլևս տների հավաքական խմբավորումներ չկային՝ մեկն այս ժայռի տակ, մյուսն՝ այն դարանում, երբեմն իրար մոտիկ, հաճախ իրարից շատ հեռու, անտառի բացատում կամ ձորափնյա հարթության վրա։ Այստեղ ոչ գյուղ էր և ոչ էլ թաղ, այլ պարզապես մեկ, երկու, երեք, կամ մինչև տասը տնից՝ գոմերից կամ մեղրեներից բաղկացած խմբավորումներ։

Ապառաժների և լեռնածոցերի կողերին հաստատված գյուղերի բնապատկերն այլ էր։ Թաղամասերը ավելանում, տեղ-տեղ էլ կանոնավոր փողոցներ էին ուրվագծվում և սակայն տների առաջամասի պատն էր երևում և կամ, լավագույն դեպքում՝ երեք պատերը, թիկունքի (չորրորդ) պատը կամ հողի և կամ ապառաժի մեջ էր ընկնում ու տեսողությունից անհայտ էր մնում։

Նման գյուղերի վերին թաղերի տների դռները բացվում էին վարի թաղերի տների տանիքին և այսպես աստիճանական ելևէջներով երկնքից կախված կանթեղների տպավորություն էին թողնում։ Այս կարգի գյուղերի երթևեկությունը ձմռան ամիսներին դժվարանում էր, իսկ տանիքների ձյունը մաքրելու աշխատանքը կատարվում էր համագործակցությամբ։ Եթե իրար վրա թառած թաղամասերը կազմված էին հինգ թաղաշարքից, ապա բոլոր թաղերի երիտասարդները բարձրանում էին ամենաբարձր թաղամասերի տների եր-

գիկը և կարգով քերում ձյունը, վար թափում ցվիքներից, մինչև որ վերջանում էր բոլոր տանիքները ձյունից մաքրելու աշխատանքը։ Ամեն օր տանիքները ձյունից մաքրելով, ծուռ ու նեղ փողոցները փակում ու ձյունաբլուրներ էին կազմում և տնից տուն, թաղից թաղ, տնից եկեղեցի այդ ձյունաբլուրների մեջ բացված թունելների միջով էին անցնում, որտեղից անասուններին եւ ջրի էին տանում (եթե իրենց բակում սեփական աղբյուր կամ գուռ չունեին)։ Թվում էր, թե այդքան ձյունը հալչելու համար տարիներ են հարկավոր և հետևաբար մարդիկ իրենց կյանքի ամբողջ տևողությունը դատապարտված են ապրել ձյան մեջ ու ձյան տակ, սակայն լեռնաշխարհի ամեն մի բնակիչ վստահորեն գիտեր, թե մարտի իններին սկսվելու է ձյան հալը։

Առանց բացառության ամեն տարի, հին ճվականով մարտի իններին, առավոտյան, ամենաուշը երեկոյան, սկսվում էր ձյունհալ քամին՝ լոտոսը, որն իր գործը վերջացնում էր մարտի 15-ից մինչև 21-ը։ Թունելները փուլ էին գալիս, մարդիկ ջրերի միջից ճամփա էին բացում, ամեն տան առջևից, ամեն տան անկյունից առվակներ, տեղ-տեղ գետակներ էին խոխոջում, մի քանի օրվա ընթացքում ձնաշխարհը վերածվում էր ջրաշխարհի և քանի որ լեռնաշխարհում հարթություններ քիչ կային, իսկ գյուղերը առհասարակ ընկած էին սարալանջերին, ոչ մի կաթիլ ջուր չէր լճանում փողոցներում և կամ գյուղամիջում։ Սովորական առուները դառնում էին վարար ջրեր, քանդում կամուրջները, բանդերը և անցք չէին տալիս ոչ մի արարածի, փրփրում, կատաղում և գոռում-գոչումով դեպի Եփրատ կամ Արածանի էին շտապում։

Նկարագրված չորս կարգի գյուղերի համար կարելի է ասել, թե ամեն գյուղ ուներ հարաղաններ կամ հյուրեր դիմավորելու և ճամփու դնելու հատուկ կանգառներ, որոնք գտնվում էին գյուղից դուրս՝ ճամփի տեսանելի հատուկ մի վայրում և ամեն մի գյուղ այն կոչում էր ավանդական իր անվամբ՝ Ջխտակ ուռիներ, Բերդար, Գայլերի կետուկ, Սմկոյին ընկույզը[1], Դավոյին աղբյուր, Ջերտեին քար[2], Աղվնկա (աղավնու) քարեր, Մուրտին սրրդ, Ջխտակ չնքեմներ, Քաքլից ազրիր, Մուրաղտուր խաչքար և այլն։

Հյուրերին կամ հարաղաններին ճամփու էին դնում վերը հիշված տեղերից մեկում՝ ողջագուրվում և բարի ճանապարհ մաղթում, սպասելով այնքան ժամանակ, մինչև որ ճամփորդը «աչից կորի»։ Նույնը և դիմավորումների ժամանակ։

Թեև ամեն տուն ուներ ձի հեծնելու հատուկ քար՝ հեծնքար (պինեկ թաշի), բայց ամեն գյուղ ուներ այդպիսին։ Ձիավորը ոտքով գնում էր իրեն ճամփու գնողների հետ մինչև բաժանման վայրը և այնտեղ բարձրանալով հեծնքարին, նստում ձին կամ ջորին (մասնավորաբար կանայք), եթե ճամփորդներ կային։ Տան դռան առջևից ձի հեծնելը կամ գյուղամիջով ձիով անցնելը ամոթ էր համարվում։ Թեև գյուղամիջում հեծնքարեր կային, բայց նախապատվություն էին տալիս բաժանման վայրի հեծնքարին։ Հեծնքարը 50—60 սմ բարձրություն ունեցող, գերեզմանաքարի նման տաշված և հղկված մի քար էր, որի վրա իրենց բեռները դնելով, հանգստանում էին նաև շալակտարները։

ՇԵՆՔԵՐ

Ինչպես բնակավայրի, նույնպես և բնակարանների ձևերը անմիջականորեն կապված էին տեղի աշխարհագրական ու բնա-կլիմայական պայմանների, բնակիչների զբաղմունքի բնույթի ու կենցաղային առանձնահատկությունների հետ։ Երկրագործի և խաշնարածի, հարուստի և աղքատի, լեռնաբնակի և դաշտաբնակի կենցաղային պայմաններին համապատասխան, տարբերվում էին նաև նրանց բնակարանները, նույնիսկ փոխադրամիջոցների տարբերությունը (լծկան՝ սայլ, թե բարձկան՝ էշ ու մարդու շալակ) իր կնիքն էր դրել գյուղական բնակարանների հատակագծերի ձևի ու ծավալի վրա, քանի որ դրանցով էր որոշվում այս կամ այն շինանյութը հայթայթելու հնարավորությունը։ Մարդիկ ժամանակի ընթացքում հարմարվելով տեղական պայմաններին, այնտեղ, ուր բացակայում էր քարը, հանքային կիրը, վայրի բարդին, կաղամախին, եղևնին, օգտագործում էին անթուրծ աղյուսը (քերփիճ) և տնամերձ բոստանի բարդին։ Մյուս կողմից էլ, ընդհանրություններով հանդերձ, միմյանցից զգալիորեն տարբերվում էին հասարակական տարբեր խավերի պատկանողների բնակարանները ու անասնական կառույցները, կապված նրանց կարողու-

[1] Սմկոն մի անվանի քաջ է եղել, որ այդ ընկուզենու տակ կռվել է տասից ավելի գայլի դեմ և սպանել յոթին, փրկելով տասը տարեկան մի երեխայի կյանք, որն անխոհեմություն է ունեցել մենակ գնալ դիմավորելու հորը և եղբորը։

[2] Ջերտեն իրեն փախցնող հովիվ Համոյի հետ այս քարի մոտ քաջաբար կռվել է իրենց հետապնդողների դեմ և փրկել Համոյի կյանքը։